

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/2

16 փետրվարի 2016 թ.

Քննարկվեց «Անեսա» ՍՊԸ ներկայացուցչի 15.01.2016 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 11.01.2016 թ-ի թիվ 310660/01 որոշման դեմ:

«Անեսա» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«Անեսա» ՍՊԸ-ում (այսուհետ նաև Ընկերություն) 25.11.2015թ.-ին համաձայն ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի կողմից 30.10.2015թ.-ին տրված թիվ 6207429 հանձնարարագրի իրականացվել է ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմին վերապահված իրավասությունների սահմաններում հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) նպատակով հարկային մարմնի կողմից իրականացվող ապրանքների, առարկաների, աշխատանքների, ծառայությունների գների, Հայաստանի Հանրապետությունում ռեզիդենտների ու ոչ ռեզիդենտների կողմից իրականացվող արժույթային գործարքների վերահսկողության և հսկիչ-դրամարկային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում), որի ժամանակ նշված ՀՏ-ի աշխատակիցների կողմից իրականացվել են ոչ իրավաչափ գործողություններ: Մասնավորապես, Ընկերության ք.Երևան, Տիգրան Մեծ 3 հասցեում գործող տուրիստական ընկերություն են ներկայացել 4 անձինք՝ Վիգեն Ավետիսյանը, Արփինե Բաբայանը, Կարինե Մարդոյանը և Արման Սարինգույանը, որոնցից Կարինե Մարդոյանը կատարել է հսկիչ գնում՝ կնքելով ծառայությունների մատուցման պայմանագիր: Այնուհետև տնօրենին են ներկայացրել ստուգման հանձնարարագիրը ծանոթանալու և մեկ օրինակը ստանալու նպատակով, սակայն հետագայում պարզվել է, որ հանձնարարագրով նշված հսկիչ գնումն իրականացնելու իրավասություն ունեցել են Արաբկիր ՀՏ-ի ընթացիկ հսկողության բաժնի գլխավոր հարկային տեսուչ Արման Սարինգույանը, ավագ հարկային տեսուչ Շահեն Հարությունյանը և հարկային տեսուչներ Մանուկ Հովհաննիսյանն ու Կարինե Մարդոյանը:

Հսկիչ գնում փաստացի իրականացնող Արաբկիրի ՀՏ աշխատակիցների կողմից 25.11.2015թ.-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6207429 արձանագրությունը, որն Ընկերության տնօրենը չի ստորագրել և չի ստացել: Սակայն պատշաճ կերպով ստորագրել և ստացել է հանձնարարագրի մեկ օրինակը: 25.11.2015թ.-ին ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ ընթացիկ հսկողության բաժնի կողմից Ընկերության տնօրենին է ուղարկվել հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6207429 արձանագրությունը ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ ընթացիկ հսկողության բաժնի պետի 25.11.2015 թ-ի թիվ 4669 կից գրությամբ, որտեղ մասնավորապես նշված է, որ ուղարկվում է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6207429 արձանագրությունը:

Փաստացի խախտվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները:

30.12.2015թ.-ին ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության 1-ին բաժնի առաջատար մասնագետ Արմեն Պետրոսյանի կողմից կազմվել է թիվ 2621 արձանագրությունը, որտեղ մասնավորապես նշվում է, որ համաձայն հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ

25.11.2015թ.-ի թիվ 6207429 արձանագրության Ընկերության տնօրենը խախտել է ծառայությունների մատուցման փողային գնանշումները ՀՀ դրամով իրականացնելու պահանջը, որի մասով Ընկերության ներկայացուցիչը ներկայացրել է համապատասխան առարկություններ: Այնուհետև ՀՀ ՖՆ Իրավաբանական վարչության պետի կողմից 11.01.2016թ.-ին կայացվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 310660/01 որոշումը, որով ընկերությանը պարտավորեցվել է վճարել տուգանք 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամի չափով:

Համաձայն «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 14-րդ կետի գնանշում է համարվում ցանկացած ապրանքի (գույքի), ծառայության, գույքի օգտագործման, աշխատանքի կատարման կամ աշխատավարձի և (կամ) դրան հավասարեցված վճարումների գնի, արժեքի կամ վարձատրության չափի հայտարարումը, ամրագրումը, սահմանումը կամ որևէ ձևով այլ անձանց հայտնելը, սակայն հսկիչ գնման ժամանակ Ընկերության և Կարինե Մարդոյանի միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրով նշված պայմանը չի խախտվել և ծառայության արժեքը նշվել է և հայկական դրամով, և արտարժույթով, ինչը որևէ կերպ չի հակասում նշված օրենքի դրույթներին: Ավելին, Ընկերությունը տվյալ պարագայում համարվում է միջնորդ ընկերություն և գործում է ոչ ռեզիդենտ ընկերությունների հետ կնքված գործակալական պայմանագրերի միջոցով, ուստի հանդես է գալիս վերջիններիս անունից և ըստ կնքված պայմանագրերի իրավունք չունի ծառայությունների գներում կատարել որևէ փոփոխություն և պարտավոր է համացանցային ցանցի միջոցով իրականացվող ամրագրման արժեքները ներառել սպառողի հետ կնքվող ծառայությունների մատուցման պայմանագրում: Սրանից հետևում է, որ տվյալ պարագայում գնանշում կատարողը հանդիսանում է ոչ թե Ընկերությունը, այլ ոչ ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը, ում անունից հանդես է գալիս «Անեսա» ՍՊԸ-ն համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխի դրույթների: Նշված առարկությունները ներկայացվել են նաև ՀՀ ՖՆ Իրավաբանական վարչությանը՝ ներկայացնելով նաև նշված փաստը հավաստող հանձնարարության պայմանագրի պատճենը:

Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ՀՀ ՖՆ Իրավաբանական վարչության պետի կողմից 11.01.2016թ.-ին կայացված թիվ 310660/01 որոշումը կայացվել է առանց հաշվի առնելու «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 8-րդ հոդվածի դրույթները, ինչպես նաև հաշվի չի առնվել նշված օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետով իրեն վերապահված պարտականությունները՝ առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 75-77-րդ հոդվածների դրույթներով Ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Իրավաբանական վարչության պետի 11.01.2016թ.-ի թիվ 310660/01 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ կենտրոնական բանկի նախագահի ՀՀ ֆինանսների նախարարին հասցեագրված 26.10.2015 թ-ի թիվ 13-07/000801-15 գրությամբ ներկայացվել է տեղեկատվություն՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից մոնիտորինգի ենթարկված արտարժույթով առևտուր և/կամ գնանշում իրականացնող

«Անեսա» ՍՊԸ-ի վերաբերյալ, ինչպես նաև միջնորդություն է ներկայացվել ձեռնարկել օրենքով սահմանված միջոցառումներ արժույթային օրենսդրության պահանջների պահպանման նպատակով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի կողմից 30.10.2015 թ-ին հրապարակվել է թիվ 6207429 հանձնարարագիրը «Անեսա» ՍՊԸ-ում ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասությունների սահմաններում հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) նպատակով հարկային մարմնի կողմից իրականացվող ապրանքների, առարկաների, աշխատանքների, ծառայությունների գների, Հայաստանի Հանրապետությունում ռեզիդենտների ու ոչ ռեզիդենտների կողմից իրականացվող արժույթային գործարքների վերահսկողության և հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում) իրականացնելու վերաբերյալ: Իրականացված հսկիչ գնման արդյունքում 25.11.2015 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6207429 արձանագրությունը (այսուհետ նաև Արձանագրություն): Ընդ որում, հսկիչ գնումն իրականացվել է վերոգրյալ հանձնարարագրում, ինչպես նաև ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 25.11.2015 թ-ի թիվ 298 հրամանում ընդգրկված պաշտոնատար անձանց կողմից (այլ ապացույցներ սույն գործում առկա չեն): Արձանագրությունում մասնավորապես նշվել է, որ հարկային տեսուչ Կարինե Մարդոյանի կողմից «Անեսա» ՍՊԸ-ին պատկանող ք.Երևան, Տ.Մեծի 3-րդ շենք հասցեում գտնվող տուրիստական գործակալությունում 25.11.2015 թ-ին, ժամը 13:20-ին կատարվել է հսկիչ գնում 250.000 դրամի չափով՝ կանխավճար, տուր փաթեթի ձեռքբերման համար: Ընկերության կողմից կնքվել է տուրիստական ծառայության մատուցման պայմանագիր 31.12.2015 թ-ից մինչև 08.01.2016թ.թ. ժամանակաշրջանում Արաբական Միացյալ Էմիրություններ, ք.Շարժա տուրիստական ուղղությամբ ուղևորություն կազմակերպելու համար, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Տնօրենի կողմից գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել, քանի որ վերոնշյալ հասցեում չկար տեղադրված և Արաբկիրի ՀՏ-ում գրանցված ՀԴՄ:

Արձանագրությունում նշված է նաև, որ վերոգրյալ պայմանագրում ընկերությունը ծառայության արժեքի գնանշումը կատարել է արտարժույթով, մասնավորապես՝ նշվել է 2730 դոլարին համարժեք դրամ արտահայտությունը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 30.12.2015թ-ի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ «Անեսա» ՍՊԸ տնօրեն Անահիտ Սահակյանը համաձայն 25.11.2015 թ-ի թիվ 6207429 արձանագրության, խախտել է ծառայությունների մատուցման փողային գնանշումները ՀՀ դրամով իրականացնելու պահանջը:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 11.01.2016 թ-ին ընդունվել է թիվ 310660/01 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Անահիտ Սահակյանի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին՝ գումարով 2.000.000 դրամի չափով:

Քննարկվող դեպքում վերոգրյալ հանձնարարագրի համաձայն իրականացվող հսկիչ գնման շրջանակներում հարկային տեսուչ Կարինե Մարդոյանի (Պատվիրատու) և «Անեսա» ՍՊԸ-ի (Կատարող) միջև 25.11.2005 թ-ին կնքվել է տուրիստական ծառայություններ մատուցելու մասին պայմանագիր (այսուհետ նաև Պայմանագիր): Պայմանագրի 2.1 կետի համաձայն Կատարողը պարտավորվում է կազմակերպել տուրիստական ուղևորություն՝ Միացյալ Արաբական Էմիրություններ, քաղաք Շարժա:

Պայմանագրի 2.4 կետի համաձայն Պատվիրատուն պարտավորվում է սույն պայմանագրի 2.1 և 2.2 կետերում նշված ծառայությունների դիմաց վճարել Կատարողին 2730 դրլարին համարժեք դրամ: Պայմանագրի կնքման պահին փաթեթի արժեքը կազմել է 1338.000 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման, աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների վճարումների, գույքի գնահատման և աշխատանքների կատարման, գույքի օգտագործման դրամական (փողային) գնանշումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի»:

Իր հերթին, ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 11.10.2005 թ-ի «Հայաստանի Հանրապետությունում արժույթային արժեքներով գործարքների իրականացման վերաբերյալ» թիվ 3 պաշտոնական պարզաբանման 4-րդ կետով հստակ սահմանվել է, որ. «Այն գործարքները, որոնց գնանշումը Օրենքի համաձայն պետք է կատարվի ՀՀ դրամով՝ պայմանագրերում և սկզբնական (հաշվառման) փաստաթղթերում կարող է նշվել միայն արտարժույթի փոխարժեքը (այլ ոչ թե գների զուգահեռաբար արտահայտումը նաև արտարժույթով)»:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ իրականացված հսկիչ գնման արդյունքում ձեռք բերված ապացույցները հիմնավորում են Ընկերության՝ ի դեմս տնօրեն Անահիտ Սահակյանի, կողմից «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքով նախատեսված դրույթների խախտում թույլ տալու հանգամանքը, ինչի համար և կիրառվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պատասխանատվության միջոցը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ռ ը յ ու մ է՝

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 11.01.2016 թ-ի թիվ 310660/01 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.Մ.ԻՐՈՒՄՅԱՆ
